ՂՈՌՈԲՈՒՂԱ.– Լաւ խոշորները կան: (Միւս հսկաներին) Հա՛մմ: Ճաշը բերէ՛ք:

ՀՍԿԱՆԵՐ.– Բերո՛ւմ ենք, Հա՛ա՛մ…(Բերում են պղինձը դնում Նազարի առաջին:)

ՓԵՐԻՇԱՆ.– (Թեւքերը քշտած՝ ձեռը կոխում է, պղինձը, խառնում է շերեփով:)

ՀՍԿԱՆԵՐ.– (Թփթփալով նստում են շուրջը:)

ՂՈՌՈԲՈՒՂԱ.– (Նազարին) Հաա՛մմ…անո՛ւշ արա, մաա՛տաղ, սիրտդ ի՞նչ է ուզում: Ե՞զ: Հա՛մմմ… (աւելի բարձր) Ուղտ, Հա՛մմ… Փի՛ղ… Հա՛ մ մ… (Թեւքերը քշտած հանում է մսի խոշոր կտորներ եւ դնում Նազարի առջեւ) Անուշ արա: (Միւսներին) Կերէք: (Ինքը քաշում է մի մեծ կտոր, միւսները նոյնպէս թեւքերը քշտած հարձակւում են պղնձի վրայ ու սկսում են լափել:)

ՂՈՌՈԲՈՒՂԱ.– Հա՛ա՛մ… մուունետի՛կ, իմաց տուր թագաւորին, թող գա կռիւ անենք: Ասա, Փեերիշանին քեզ կնիկ չենք տալու.: Ասա, էլ մեր թաագաւորը չե՞ս:

ՄՈՒՆԵՏԻԿ.– Աչքիս վրայ (Ածում է պարկապզուկը ձախ ձեռքի մատներով, իսկ աջով՝ փչում է զուռնան) Է՛յ, թագաւոր, քեզ իմացում, Փերիշանը քեզ չենք տալիս: Էլ մեզ թագաւոր չես: Արի կռիւ անենք:

ՂՈՌՈԲՈՒՂԱ.– (Վեր է թռչում) Հա՛մմմ…

ՆԱՁԱՐ.– (Ցնցուելով) Մնար մի ուրիշ անգամ, իմանո՞ւմ ես:

ՂՈՌՈԲՈՒՂԱ.– (Դես-դեն ընկնելով, կռուի տրամադրուած) Իմանո՛ւմ եմ, մաատաղ, իմանում եմ… (Հսկաներին) Լաա՛ւ զինուեցէք. կռիւ պիտի տանք… Հա՛մմմ… (Շառաչ հանելով հագնում է զէնք ու զրահը: Միւս հսկաները նոյնպէս: Ապա բարձրանում է ամրոցը, այնտեղից դիտում է շրջակայքը, վազում է վար ու դարձեալ պտոյտներ գործում դեսուդեն):

ՆԱՁԱՐ.– (Նրա հետեւից ման գալով) Ը՛, ը՛, գեադա՞, ի՞նչ եմ ասում… Խաղաղութիւնն աւելի լաւ է… Իմանո՞ւմ ես:

ՂՈՌՈԲՈՒՂԱ.– Հը՞ հա՛: (Մեքենայաբար կրկնում է) Խաաղաղութիւնն աւելի լաւ է: (Վազում է նորից ամրոցի գլուխը եւ իջնում ցած): Հա՛մմմ…. եկա՞ն:

ՄՈՒՆԵՏԻԿ.– Դեսպան եկաւ թագաւորից:

ՆԱՁԱՐ.– (Հազում է) Ըհը՛…

ԴԵՍՊԱՆ.– (Մտնելով ձախից)